

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի տեղաբնակի գաղեր:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթի, կիրակի օրերով: 10 ամսայ զինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կող., դուրսը՝ 3 մանկի:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(Ա.Ռ.Ա.ԶԻՆ ՏԱՐԻ)

Գաղերին տոնադրվիլ կարելի է խմբագրել մօտ:

Գաղերին հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Կովկասի փոխարքայի պալատից տորգեր: Ազատ առուտուրի մասին: Տեղեկութիւններ Ապրիլի 4 անցքի մասին: Պ. Բոնչուսկու խօսքայի վրայ կարգացած դասերի մասին: Խմբագրողի ու տոնադրողի խօսակցութիւնը: Զանազան տեղեկութիւններ: Առեւտրական տեղեկութիւններ:

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐԿԱՅԻ ՊԱԼԱՏԻՑ:

Ապրիլի 30-ին, շաբաթ օրը, կատարվեցաւ Թիֆլիսում Նոր ծնված Մեծ Իշխան Ալեքսանդր Միխայելովիչի մկրտութիւնը:

Կովկասի փոխարքայ Մեծ Իշխանը Մայիսի 1-ին գնաց քաղաքից դէպի Երևանի դաւառը:

ՏՈՐԳԵՐ:

Քութայիսի գաւառական կառավարութիւնումը Մայիսի 30-ին նշանակած է Նիկոլայեւիչի մագաղիկից Օդուրդեթի մագաղիկը 2475 չեթվերտ ալիւր և 242 չեթվերտ կրուպա հասցնելու տորգը:

Կովկասի Արտիլերիի կառավարութիւնումը Մայիսի 10-ին նշանակած է արտիլերիի Նիլ-թիւղենների և գործիքների հասցնելու տորգը:

ԹԻՖԼԻՍ

Մայիսի 7—1866.

Կարծիք չկայ, որ առուտուրը պէտք է ազատ լինի—էդ պահանջում է առողջ դատողութիւնը, ճշմարտութիւնը և իրաւունքը: Աշխատանքի և առուտուրի ազատութիւնը միմեանց հետ անբաժան դադափառներ են: Բայց յետագէ՞մ քաղաքական անտեսները առաջարկում են առուտուրի ազատութեան համար ոչնչացնել մաքսատները և վերացնել մանաւանդ ներս գալու ապրանքների մաքսերը: Ինչ է ուրեմն զրանց պահանջած առուտուրի ազատութիւնը.

նը. եթէ էդ ազատութեան նպատակն է միմեանց օտար երկրի ապրանքների առանց մաքսի ներս բերելը, օտար երկրի ֆաբրիկաների մաքսուելը մերերի հետ—էդ ոչ թէ ազատութիւն է, այլ առեւտրական անկանոնութիւն, չհասարական ինքնակամութիւն, կնշանակէ միջոց տալ ուժեղին իր ուժը գործ դնել տկարի դէմ, մշակներին յաւետան ճորտ պահել և փողին ու զրամաղլիսին յաղթող հանդիսացնել:

Առուտուրի ազատութիւնը պէտք է հիմնված լինի երկու երկիրներէլ իրանց ապրանքների հաւասար տուր և առի վրայ: Եթէ մէկ երկրորդից է փոխում և ծախում իր ապրանքը միւսի վրայ—էս ընդդէմ է խղճմտանքին և անտեսական օրէնքին: Եդ պատճառով ամենքը, որոնք փոխում են կամ ծախում են իրանց ապրանքը, պէտք է ստանան փոխարէնը էլի էնքան զին ունեցող ապրանք կամ փող, ըստացածը տվածի հետ հաւասար պէտք է լինի, ոչ աւելի և ոչ պակաս: Եդ բանի վրայ հիմնված է բոլոր հասարակական անտեսութիւնը: Ամեն առուտուր, որ էդ օրէնքի վերայ չէ հիմնված, վնասակար է:

Հիմի տեսնենք, թէ ազատ առուտուրը կարող է ճիշդ պահպանել վերոյիշեալ բնական օրէնքը, այսինքն թէ տալ էնքան, որքան առնում ենք: Ամենին չի կարող: Յայտնի է, որ աշխահիս ամեն ծէրերից բնական բերքերը (բուրդը, բամբակը և այլն) տանվում են միմեանց մէկ երկու տէրութիւններ, որոնք բերքերը մշակելով իրանց ֆաբրիկաներում էլի նորից յետ են դարձնում էն երկիրները, որտեղից ստացան և երկու երեք իր սկզբնական գնով յետ ծախում: Ասենք թէ քաղաքական անտեսների քարոզած առեւտրական ազատութիւնը էլաւ, այս ինչքն թէ մաքսատները և մաքսերը վերացան, ամենքը ազատ կարող են միւս ապրանքների հետ ոսկի ու արծաթ էլ դուրս կրել որ և իցէ երկրից:

Օտար երկրացիք կբերեն մեզ օրինակ 1,000 մանէթի իրանց ֆաբրիկաների ապրանք ու էդ ծախելուց յետոյ տեղը կառնեն մէկ 500 մանէթի բնական ուր և իցէ իրանցը հարկաւոր բերք, օրինակ բամբակ ու մնացած 500 մանէթի ոսկի և արծաթ կդուրս տանեն մեր երկրից, մէկ քանի անգամ կընկնելով էդ բանը, վերջը կդուրս դայ, որ մեր երկրումը փող չի մնալ, մեր առուտուրը կդադարի ու մենք ստիպված կլինենք դառնալ. դէպի օտար աղղերը ու ոսկի փոխ ուղղի նրանցից:

Եդպէս ահա ազատ առուտուրը բերում է մեզ էն հետեանքին, որ մենք պարտաւորված ենք լինում օտարներից յետ առնել մեր ոսկին աւելի թանկ գնով, քան թէ մենք ինքներս ծախում ենք: Ուրեմն էդ քարոզած ազատ առուտուրը առեւտրական անիրաւութիւն է, խաբեքայութիւն է: Են ժամանակը էդ քարոզած ազատ առուտուրը կլինէր ազատ, երբ որ հազար մանէթի ներս բերած ապրանքի տեղը օտարազգիքը դուրս տանէին մեր երկրից էլի 1000 մանէթի ապրանք և ոչ թէ ոսկի, որովհետեւ ապրանքները, ինչպէս բուրդը, բամբակը, ապրելումը, թուրանը, հացը, զինին, մենք էլ կարող ենք պատրաստել որքան էլ կամենանք, բայց ոսկի պատրաստել մեր կամքից չէ: Եդ հանքից հարկաւոր է փորել ու հանել, որ ինչպէս յայտնի է՝ շատ անգամ ի դուր է կտրւում մեր աշխատանքը: Առուտուրի մէջ միշտ նրա կողմն է օգուտը ու աւելի փող ունէ ու կարողացել է սրան կամ նրան շահով իրանց տալ:

Ով է հարուստը—փողատէրը, որը որ նաղդ ոսկի և արծաթ ունէ, թէ վաճառականը, որը որ ապրանք ունէ դարձած իր ամբարներումը: Փողատէրը միշտ կարող է առնել ինչ որ կամենայ, իսկ վաճառականը առաջ պէտք է ծախէ իր ապրանքները, որ յետոյ փող ունենայ, իսկ ապրանքը

ները ինչպէս յայտնի է ամեն բոլորէ ու մնայ որ լինի չի կարելի ծախել: Շատ անգամ վաճառականը կուտարանում է, եթէ նրա ասարանքներն առնող չկայ: Ամեն փոքրիշատէ առուտուրի հետ ծանօթ մարդը զիտէ, որ առանց փողի առուտուրը—կուտարանները չան է, եղ է պատճառը, որ ոսկու ու արծաթի մեր երկրի սահմանից դուրս տանելուցը կանգնում է ու դժուարանում է առուտուրը:

Ա. Ե.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՊՐԻԼԻ 4 ԱՆՅՔԻ ՄԱՍԻՆ:

Արդէն բոլորովին հաստատուեցաւ հիմի որ չարագործը, ոչ Պետրով է, ոչ Իվանով, ոչ Օլշիվսկի և ոչ մէկ ուրիշ բան, այլ Դիմիտրի Կարակոզով: Էդ մարդը ինչպէս երևում է Մոսկովի համալսարանումը դրսևած նրա թղթերիցը, 1861 թվին մտել է Ղազանի համալսարանը, իրաւագիտութենի ֆակուլտետում և մի նոյն տարին Հոկտեմբերին արձակված է էնտելից՝ անկանոն դործերի համար: 1863 թվի աշնան նրան նորից էլ ընդունել են Ղազանի համալսարանը, իրաւագիտութենի ֆակուլտետը, որ տեղ մնացել է մէկ տարի, մինչև 1864 թվի Սեպտեմբերի 29 և դուրս են տարել առաջին կուրսից երկրորդը: Բայց յետոյ չուտով խնդրի է տալիս և համալսարանից արձակվում: 1864 թվի Հոկտեմբերի 14-ին գնում է Մոսկով և տալիս Մոսկովի համալսարանին իրան էնտել ընդունելու խնդիր: Մոսկովի համալսարանը դժուարանում է էլէլ նրան ընդունելու, որովհետև անց էր կացրել սա մէկ համալսարանից միւս համալսարան մանկու համար նշանակած ժամանակը: Էդ պատճառով դա խնդիր է տալիս Մոսկովի դատաւի ստուգական մասի հաղաւարձութիւն, սրանից յետոյ և Ղազանի համալսարանից էլ պատասխան ստանալուց յետոյ, թէ Ղազանի համալսարանից Մոսկովի համալսարան փոխվելու սրան ոչինչ արգելք չկայ, ընդունել են իրաւագիտութենի ֆակուլտետի երկրորդ կուրսումը առանց քրննութենի: Պէտք է ուշք դարձնել էն բանին, որ նրա տված երկու խնդիրները մէկը Մոսկովի համալսարանին և միւսը Հոգաբարձութիւն, ստորագրած են զմայալան կերպով, ուրիշ ուրիշ ձևով: Հիմի էլ կան համալսարանումը նրա ընկերները, որոնք հաստատում են, որ նրան բոլորովին չեն տեսել, նրա մասին ոչինչ տեղեկութիւն չունին և չեն գիտի մինչև անգամ նրա անունը: Դա-

սերի լսելու նա չէ էլէլ գնում և յայտնի չէ, թէ ինչի համար է մտել համալսարան: Քրննութիւններին ներկայ չէ գտնվել և վարժապետներին բոլորովին յայտնի չէ էլէլ սա: 1865 թվի կիսին սա դուրս եկաւ Մոսկովի համալսարանից: Գնում է Սարատովի դաւառը, իր հայրենիքը, էն անցաթղթով, որ նրան իրաւունք էր տալիս մինչև Օգոստոսի 15-ը մնալու էնտել: Բայց յետ չդառնալու և ուսանողական փողը չլծարելու պատճառով Համալսարանը արձակել է սրան 1865 թվի կիսին: 1865 թվի Օգոստոսի 15-ից սա ապրում է էլէլ առանց անցաթղթի:

Կոմիսարով—Կոստրոմսկու, Թագաւորի ազատողի մասին ասում ենք էս անգամ, որ նրա համար Պետերբուրգումը մէկ տուն առնելու պատճառով առանձին կոմիտետ է սարգել: Մինչև Ապրիլի 17 դառադան մեծամեծներէց ժողովել է 4185 մ:

Աւստրիայի կայսրը ուղարկել Կոմիսարով—Կոստրոմսկու համար Ֆրանց—Լատֆի ասպետական նշանի խաչը:

Պ. ԲՕՆՉԵԽՍԿՈՒ ԽՕԼԵՐԱՅԻ ՎՐԱՅ ԿԱՐԴԱՅԱԾ ԴԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ:

3 և վերջին*

Յայտնի է, որ ինչտեղ աւելի ջրոտ է դետինը, ցիկն է, և վերջապէս փափուկ հող է, էնտել աւելի չուտ կարող է փախլ ամեն բան: Էս պատճառով ահա խօլերան էլ աւելի երկար է մնում էն երկիրներումը, որոնք ունին վերոյիշեալ յատկութիւնները: Խօլերայով հիււանդի լուծածը եթէ մնում է մէկ ցիտո կամ փափուկ հողի վրայ, էն ժամանակը արեգակի ճառագայթներէցը սկսում է փախլ և հոտիլ էդ աղըը և դրա վնասակար կազերը տարածվելով օդի մէջ սաստկացնում են օդի ապականութիւնը և ուրեմն ցաւը: Անցեալ տարի խօլերան թէև բոլորովին վերջացաւ Կովկասի կողմերումը, բայց եթէ կայ մէկ կտակածաւոր տեղ, որտեղ որ կարող էր ծածկվիլ առ ժամանակ էդ ցաւը, էդ է Գուրիան և Ռիոն գետի ափերը, ուր ճահիճները և ցիտո հողը ունին խօլերային իրա մէջը բնակութիւն տալու և նորից տարածելու բոլոր պայմանները:

Խօլերան կարող է լինիլ ամառը և թէ ձմեռը, թէ բարձր տեղերումը և թէ դաշտերումը:

Խօլերայի թոյնը պտտելով օդի մէջը անշուշտ կարող է թունաւորել ամենքին, որոնք

* 1 և 2 տես Վաճառականի 6 և 7 № ներումը:

ծծում են էդ ապականութե օդը, բայց կան էնպիսի կազմուածք ունեցողներ, որոնք ընդունակ չեն էդ բանից հիւանդանալու: մանաւանդ շատ քիչ է ներդործում խօլերայի թոյնը բժշկներին և տոհմատարակ սովոր մարդկանց վրայ, բայց աւելի շատ ներդործում է և կոտորում է խօլերան աղքատ և մշակ մարդկանցը: Լադուրից երևում է, որ միմիայն օրինաւոր և իստակ կեանք վարելը ու բժշկվելու բոլոր միջոցները (փողը զլխաւորապէս) ամենալաւ հնարքներն են էդ ցաւի դէմն առնելու: Բայց քանիսն են էդպիսի բազմաւորները:

Խօլերայի ստատիստիկական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ 100 հիւանդից միւս մեռնում են մինչև 60-ը, ինչ տեսակ կուզէ լինի դրանց բժշկութիւնը: Երեխաները, որոնք չեն հասած դեռ մէկ տարեկայ հասակին, մեռնում են բոլորը, մինչև տասը տարեկան երեխաները մեռնում են հարիւրից վաթսուներ, մինչև 20 տարեկանը—40%, քսան տարեկանից աւելի հասակաւորները աւելի շատ են մեռնում և մինչև 50 տարեկան հասակը 50%, իսկ ծերութենի ժամանակը մինչև 70%: Կանայք աւելի քիչ են հիւանդանում և կոտորվում, քան թէ մարդիկ, որովհետև կանայք քիչ են բանում, մշակութիւն անում, և ուրեմն նրանց մարմինը քիչ է մաշվում, քան թէ մշակ մարդկանցը: Բայց էդ կանայք իրանց կազմուածքի մէջ ունեն պահած աւելի դիւրութիւն, եղ, քան թէ մարդիկ, որոնք հիւանդութենից յետոյ կերակրելով նրանց մարմինը, միջոց է տալիս չուտով առողջանալու:

Խօլերան ինչպէս և միւս սրա նման ցաւերը մէկ օր տարակոյս չկայ, որ պէտք է վերանան աշխարհի երեսից, երբ որ երկրիս վերայ աւելի քիչ քաղցած ու ծարաւ և աւելի քիչ տղէտ ժողովուրդ լինի, քան թէ հիմի:

Անցեալ տարեկայ խօլերան միտք տվեց Եւրոպայուց տէրութիւններին ժողովիլ Կ. Պոլսի մէջ և ընդհանուր խորհրդակցութենից յետոյ, պտուել էդ ցաւի դէմն առնելու միջոցները: Էդ ժողովը (կոնֆերենցիա) մինչև էսօրս ունեցաւ մէկ քանի նիստ, բայց դեռ չէ վերջացրել իր դործը, վասնորոյ և չեն յայտնի դեռ ևս դրա ընտրած միջոցները:

Խօլերայի աշխարհից վերացնելու համար անպատճառ հարկաւոր է ոչնչացնել էդ հիւանդութենի ծագման աղբիւրը: Լոյսը համար հարկաւոր է իստակել և ցամաքացնել Հնդկաստանի Գանգէս գետի ճահիճները և էնտելի խեղճ ու մաշված բնակիչների դըրութիւնը լաւացնել: Անցեալ տարի խօլե-

բան սկսվեցաւ ու տարածվեցաւ Մէքսիկայի, էջ պատճառով էլ հարկաւոր է Տաճկաց Բայ-բաշին տօնին ժողոված ահադին բազմաթիւն համար հոգալ՝ Վիդիկէայի պայմանները պահելու: Էջ կրկու հնարքները ի հարկէ կարող են միմիայն տէրութիւնները դործ դնել: Յոյս կայ, որ եթէ էջ կրկու կեդրոնները վրայ առանձին ուշադրութիւն դարձնեն Եւրոպայի տէրութիւններ, բոլորովին վերջանայ խօսքս:

Յայտնի է, որ խօսքայի արդէն մէկ տեղ էլած ժամանակը միւս տեղերումը ցաւին առաջն առնելու մտքով կարանտիններ են տարդու: Բայց կարանտինները բացի են սաստիկ վնասը, որ տալիս են որ և իցէ երկրի թէ առուտուրին և թէ ծաղկելուն, ոչինչ մէկ օգուտ չեն տալիս էջ ցաւի առաջն առնելու համար, բացի յայտնի վնասը՝ որովհետեւ էստեղ կարանտինի պայմանները կատարող առողջ ճանապարհորդները ստիպւած լինելով հիւանդներին հետ միասին մինալ մէկ քանի ժամանակով իրանք էլ ընկնում են էջ ցաւից ու ակամայ սկսում են տարածել: Բացի էջ խօսքայի մասնաւոր տեղերում վերջացնելու հնարքը ինչպէս վերջը կը տեսնէք առանց կարանտինի էլ կարող է դործ տեսնել: Խօսքայի ժամանակը հարկաւոր չէ միմիայն ժողովուրդներին մէկ տեղից միւս տեղ քոչելը, որովհետեւ յայտնի է որ էջ ցաւի տարածողները միշտ ճանապարհորդներն են: Խօսքայից փախչել կարելի է և հարկաւոր է, երբ որ դեռ էստեղ չէ երկացել ցաւը և միայն սպասում են դաւան, բայց եթէ արդէն երկացել են նշանները, նրանից յետոյ փախչելը աւելորդ է, որովհետեւ դժուար թէ փախչողը ինքն էլ չլնասովի, և հետը տանելով ուրիշներին էլ չղցէ խօսքայ:

Ասելը մինչև անգամ աւելորդ է, որ հարկաւոր է մեր տները և քուէքը խտակ պահել, բայց ոչ թէ էն ժամանակ երբ խօսքան գլխներին կանգնած լինել, այլ շատ առաջ և միշտ:

Հարկաւոր է աղքատների կերակուրը լաւացնել և սարգ օգ ծծել տալ, բայց ոչ թէ էն ժամանակը երբ արդէն հիւանդացել են:

Խօսքայով հիւանդների լուծածը հարկաւոր է հեռացնել մարդկանց բնակութեանից, բայց էջ բաւական չէ, պէտք է ոճնայնել դրա խօսքային թոյնը, էլուր համար հարկաւոր է առնել շատ ածան դեղ—երկաթեայ թթու (железный купорос, ժանդաւ) որի մէկ փային հարկով չորս փայի ջրումը, ամէլ յետոյ էջ օրը երկու անգամ արտաքնոցներումը և

լուծածի վրայ: Մի և նոյնը պէտք է անել արդէն փոխած և կեղտոտած ներքնաշորի հետ:

Մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել առհասարակ արտաքնոցների վրայ: Պ. Բօնչևսիկին, խօսելով էս մասին, խորհուրդ էր տալիս դործ անել միշտ Թիֆլիսումն էլած սովորական սարսկական ձևով շինած արտաքնոցները, որոնք որ 7 կամ 8 արշին փորած հորեր են դեմնի մէջ: Էստեղ չղանց առաւ Պ. Բօնչևսիկին. ասել մէկ քանի աղղու խօսք էն մասին, թէ քաղաքի մէջ էլած Վուր դեմնի անկը զատարանները (զենարանները) և վերջապէս թէ բուն քաղաքի և թէ Հաւաբարի կողմից գետի մօտերումն էլած կեղտոտութիւնները անպատճառ խօսքայի ժամանակը էջ ցաւի բնակութեան տեղը պէտք է համարվին: Աւելորդ է հաստատել էջ բանի ճշմարտութիւնը: Վանքի մօտերից ըսկաւ մինչև Մնացալանեանի կամուրջը և մանաւանդ Մուխրանեան թաղումը էնպիսի զղուէլ հատեր են պատում, որ ոչ միայն խօսքայի, այլ և ամեն ցաւերի պատճառ կարող են լինել: Ուրիշ մեծ քաղաքներումը չկայ էջ բանը, որ զատարանները ուղղակի քաղաքի մէջ տեղը լինին շինած և մարդած տաւարի աղիքներով ու արիւնով հարկւներով խողբ լինին պահում: Մուխրանեան թաղի մօտերումը գետի ափերին արիւնից ճահիճներ են դարձած և մէջը անթիւ խողբը լող են տալիս. ինչպէս կլինի սրա ներդործութիւնը մեր առողջութեան վրայ ամառայ 25° չոգերին:

Խօսքայի ժամանակը բժշկները իրանց ցոյց տված անձնադոհութեանով ի հարկէ ժողովրդի միայնակ պաշտպաններն են: Հիւանդանոցների շտապները քաղաքի մէջ էջ ժամանակը, օգնութեան առաջին հարկաւոր պայման է: Բայց ի հարկէ բժշկները իրանք միայն տէրութեան օգնութեանով ոչինչ մէկ նշանաւոր բան չեն կարող չինել, եթէ դանա խօսքայի սարսկակի ժամանակը հարուստները չեն բաց անիլ իրանց սնդուկները աղքատ և կոտորվող ժողովրդին օգնութիւն հասցնելու:

Ահա բոլորը, ինչ որ կարելի էր ասել խօսքայի մասին: Ինչպէս տեսաք խօսքայի երկուց առաջ հարկաւոր է խտակ և կանոնաւոր կեանք, իսկ հիւանդացած ժամանակը բժշկի օգնութիւն: Էստեղ յիշել դեղերի անուանները անօգուտ է և աւելորդ, որովհետեւ և ամեն մարդ զանազան բնութեան և կազմուածքի տէր լինելով, անշուշտ և զանազան դեղերի կարօտութիւն ունէ:

Վերջացնելով իր դասերը, Պ. Բօնչևսիկին

դարձաւ իր լսող հանդիսականների մէջն էլած կանանցը էս խօսքերով՝ օվերջապէս ևս դառնում եմ դէպի ձեզ իմ լսող Թիֆլիսի տիրուհիք, զարգանող սերնդի մայրեր և քոյրեր: Ձեզ վրայ պարտականութիւն կայ մեծ դործ շինելու—էջ դործն է սկզբնական դաստիարակութիւնը և ահա ձեզ իմ խոնարհաբար խնդիրը: Ասացէք դուք ձեր ընկերներին, ձեր սրտոցը, ձեր փոքր եղբայներին և քոյրերներին, որ ամեն թաղաւորութիւններին հոգով և մարմնով առողջ անդամներ են հարկաւոր, ասացէք որ առողջութեան վրայ խօսողը բժշկականութիւնն է, որը որ մեր ժամանակներումը էդպէս բարձր էնդուր է կանգնած, որովհետեւ ուսումնականների չորս պատերի միջից դուրս դալով կեանքի հետ խառնվում է արդէն: Երբ որ էս գիտութիւնը միւս հասարակական գիտութիւնների հետ միասին հասկանալի կդառնայ հասարակութեան համար, կլուսաւորէ ժողովրդին, էն ժամանակը ամենքը կհասկանան թէ ինչ է հարկաւոր դործելու, և ճշմարտութեան ու առողջութեան թաղաւորութիւնը կտիրէ երկրի վրայ: Խաւար աշխարհի մութը դործելը կանհետանա. գիտութեան լուսիցը և մեր ապագայ բաղդաւոր սերունդների կեանքը մեր կեանքի պէս չի լինիլ դարդակ և յիմար:

«Ճշմարիտ չէ, պարոններ:

Ա. Ե.

ԽՄԲԱԳՐՈՂԻ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՎՈՂԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

—Ինչպէս էք, ինչպէս է ձեր ժուրնայլ բանը: Հարցրուց մէկ ստորագրվող ժուրնայլ խմբագրողին պատահելիս:

—Ինչպէս պիտի լինի, յայտնի բան է ինչպէս: Այժմ էս բոլորովին համոզվեցայ, որ հայերի մէջ անկարելի է օրագրագրողականութիւն անել աղիւ մարդերին: Մտաւերկեցէք խնդրեմ իմ բոլոր աշխատանք այսքան տարի ժամանակամիջոցում: Այսպէս պիտի դնահատել աղղի մշակներին? Այլապէս անկարելի է հասկանալ այս իրողութիւն, եթէ ոչ այնով, որ դեռ վաղ է հայերի մէջ ամենայն լաւ դործ...

—Քանի ստորագրվող ունիք հիմի էս տարվան համար, հարցրուց խմբագրողին նրա ստորագրվողը:

—Այնքան, որքան հարկաւորվելու էր միայն երկու ամսվան նիւմբօների տաղադրելու համար: Բաժանորդաւորվել են, բայց մինչև այսօր

առանց վճարման բարձր թողի են արած բա-
ժանորդագրական դրամեր, մանաւանդ օտա-
րաքաղաքացիներ: Միթէ կարծում են իմ
ծախքով տպել օրագիր—ա մենեխն և ոչ եր-
բէք—անկարող եմ ես և նիւթական զո՛ւ անե-
լու իմ կողմից, բաւական է բարոյական...

—Ուրեմն ինչպէս երևում է ոչինչ օգուտ
չի մնալ ձեզ ձեր ժուրնալիցը:

Օգուտ բառն իմանալով, խմբագրողի երե-
ւոյ, ինչպէս ասում են թիվեցաւ. երևալ մուս-
կուշները մէկ կերպ ձև ստացան, որով պարզ
երևում էր նրա սպան արհամարհանքը դէպի
իր լսողը:

Երկու, երեք բոլորից յետոյ խմբագրողը թէ՛
—Ես այդ ձեր խօսքին պատասխան կտայի,
բայց աւելորդ եմ համարում, այնոր համար
որ դուք մինչև այժմ ինձ չեք գնահատում:
Ամօթ ձեզ համար և կրկին ամօթ!.. Ես օրա-
դրագրողականութիւն անեմ օգուտի, դարձելի
մնալի համար!.. Ոհ, անտանելի ցաւ աղնիւ-
մարդերի սրտի համար!.. Եւ միթէ կարելի էր
այդ միտք երևակայել բարեմիտ մարդին?!

—Ինչի, ինչի եք տաքանում Պ. խմբագրող:
Գուք ինքներդ գանդաւում եք, որ փող չեք
ստանում ժուրնալի տպելու համար. ուրեմն
ինչ մեղք կլինէր բաւական փող ստանալ
ժուրնալի ծախսերը հոգալու և միթէ ընդ-
դէմ է բանական խելքին օգուտ էլ ունենալ
ժուրնալից, եթէ ձեզ համար չստանալու, դո-
նեւ ժուրնալի համար օգնականներ վարձե-
լու ու միջոցներն ընդարձակելու: Աւելի լաւ
չի լինի աւելի փող ստանալ և ժուրնալի
նումքներն իր ժամանակին հրատարակել
և ոչ թէ հիմիկական պէս 2, 3 ամսով ուշ:
Ուր է ձեր ժուրնալի էս տարւոյ 1 ՊՁ-ը,
որ յայտարարութեամբ խոստացել էիք ֆե-
ֆովարին հրատարակել: Հիմի Մայիսիս կիդ-
բըն է, հաշւեցէք քանի ժամանակով եք ու-
շացնում: Եւ ինչ մեղք է օգուտ ունենալը
ժուրնալից, եթէ հասկանում եք, որ ամեն դործ
վարձատրվելու է: Աշխարհում անվարձ աշ-
խատանք չկայ և չպէտք է էլ լինի, քանի
որ ժամանակը փողի հաւասար զին ունէ: Էն
գործը, կտայ մարդու արժանի վարձատրու-
թիւն, որնոր արժանաւորութիւն ունէ: Օգուտ
է ստանում գործողը—նշանակում է չահվում
են նմանապէս գործածողները:

—Ուրեմն իմ դործ անօգուտ է? աղաղա-
ղակեց խմբագրողը: Անհասկացողներ ի հարկ
է անկարող են գնահատել իմ աղնիւ դործ:
Ես չեմ կամենում ձեզ պէս անհասկացող բա-
ժանորդագրող ունենալ: Այսօր իսկ ընդ-
հատվում է իմ և ձեր մէջ բարոյական կապ!...

—Ի՞նչ եք ասում, Պ. խմբագրող: Ես ձեզ

էնպէս բաներ եմ ասում, որին պարտաւոր
եք ուշք դարձնել ոչ թէ միայն իրրե խմբա-
գրող, այլ և իրրե մարդ: Գլխիցը պէտք է
հանել էդ անհիմը անձնանկրութիւնը և ազ-
գասիրութիւնը—ծիծաղելի են հիմի էդ բա-
ները. ամենքը հասկանում են հիմի էդոնց
անհաստատութիւնը: Կատարեցէք ուրիշների
համար հարկաւոր դործ և պահանջեցէք էլ
ձեր վարձը, ամօթ չէ: Հա, կարող էիք բո-
լորովին անվարձ, ձրի բաժանել ձեր ժուր-
նալը, եթէ կարողութեանի տէր լինէիք: Ի՞նչ
պէս կարելի է անվարձ մնալ և օգուտ չու-
նենալ: Վարձ ստանալը չէ ցածութիւն, այլ
անարժան բանի համար վարձ պահանջելն
է սաստիկ ցածութիւն: Հասկանում եք:

Ես խօսքերից յետոյ ձեռը չտատով դէպի ծոցը
տարաւ Պ. խմբագրողը, ուղում էր էս ւտո-
րագրվողի տված փողը յետ դարձնել. բայց
արաւ իր քսակը, բայց տեսնելով որ էնքան
փող չկայ մէջը, քանի էլ հարկաւոր էր ասաց՝
—Գուք, պարոն իմ անարժան ստորագրող,
կատանաք ձեր դրամ անշուշտ այսօր իսկ:

—Տեսնո՞ւք, պատասխան տվեց ստորագրողը
նրանից հեռանալով, որ ձեր ատած փողը
չունենալով չկարողացաք ձեր սրտի ցանկու-
թիւնը կատարել: Թող մնայ ձեզ մօտ իմ
փողը—չեմ կամենում վեր առնել...

ՋԱՆԱՋԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Խօսերան էս տարի: Փետրվարի

28-ին Նստումը, որ Մոլդովայի ղլխա-
ւոր քաղաքն է, երեւոյա խօսերա և մինչև
Մարտի 21-ը 8 մարդ է հիւանդացել նրա-
նով, որանցից 4 մեռել են:

Մարտի 28-ին Անդլիայի չոգենաւաներից մէկը
դուրս եկաւ Կիլբրալդից: Ճանապարհին էդ
չոգենաւումը խօսերա է լոյս ընկնում: 1000
մարդ է լինում էն չոգենաւումը, սրանցից մէկ
քանի օրումը 140 մարդ մեռնում է խօսերայով:

Ռուսաստանի նոր դատաստա-
նատները: Պետերբուրգումը Ապրիլի 16-ին
արդեն բաց են էլէլ Սենատի կատարիճների
դեպարտամենտները, դատաստանական պա-
լատները և դատաւական դատաստանատները
բաց էլան Ապրիլի 17-ին և Մոսկովումը Ապ-
րիլի 23-ին:

Անդլիայի դրսի առուստուրը:

1864 թւին Անդլիա բերած է զանազան
ապրանքներ 274,952,172 ֆունտ ստերլինգի:
1864 թւին էդ երկրիցը դուրս է տարած
զանազան ապրանքներ 212,588,236 ֆունտ

ստերլինգի:

Գուրս տարած ապրանքներից ղլխաւորն է
բամբակեղէնը: Էդ 1864 թւին 1,101,566,342
եարդ ջներկած բամբակեղէն է դուրս տա-
րած և 422,958 եարդա ներկած բամբա-
կեղէն:

Վանքի եկեղեցու 1863 թւի

մուտքն ու ծախսը: «Մեղու Հայաս-
տանի» 16 ՊՁ ումը տպած վանքի եկեղեցու
երևախոխի հաշից երևում է, որ 1863 թւին
էդ եկեղեցին 3107 մ.64 կ. մուտք է ունե-
ցել և 1599 մ. 32 կ. ծախս: Ուրեմն հիմի
էս տարւոթիւն 1508 մ. 32 կ. աւելորդ փող
ունէ եկեղեցին:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիվերպուլ Ապրիլի 26.

Բառքալը կէս պէս էլ ցած ընկաւ
անցեալ շաբաթվայ գներից, թէ և ծախ-
վեցաւ մէկ քանի հազար հակը:

Պետերբուրգ Ապրիլի 23.

Առաքը Լճիգնի վրայ երեք ամսով
28 պէսա:

Պարիժի վրայ . . . 290 սանտիմ:
50/0 Լատարեյով առաջին փոխառու-
թենի տոմսակները . . . 109 1/2 ման.

50/0 Լատարեյով երկրորդ փոխառու-
թենի տոմսակները . . . 105 1/2 ման:
Ոսկին 6 մ. 82 կ.

Թիֆլիս 1866 Մայիսի 8.

Բամբակի առուստուրը շատ ծանր է:
Ծախողները 8 մ. 50 կ. դժուարանում
են տալու. առնողներ չկան:

Բուրդը —
Լեղակը 6 ամիս ժամանակով
155 մ.

Ինգլիզու շաքարը . . . 9 մ. 70 կ.

Ռսինը 10 մ. 80 մ.

Արծաթը 72 պրօբի 60 մ.

— — 84 պրօբի 260 մ.

Ոսկին 6 մ. 82 կ.